Հաստատում եմ
<<Սուրբ Գրիգոր Լուսավորիչ>> ԲԿ ՓԲԸ-ի
պետական բժշկական քոլեջի
տնօրինական խորհրդի նախագահ՝
_____ Ռ. Սարգսյան
06 _____ 2021թ

Տնօրինական խորհրդի նիստ թիվ2
06.05.2021թ.

<<ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ>> ԲԿ ՓԲԸ-Ի ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ, ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՈՐԱԿԻ, ՆՐԱՆՑ ՎԱՐՔԻ, ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2021թ.

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է <<Սուրբ Գրիգոր Լուսավորիչ>> ԲԿ ՓԲԸ-ի պետական բժշկական քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) տնօրենի կողմից ուսուցման բովանդակության, ուսանողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, դաստիարակչական աշխատանքի կազմակերպման նկատմամբ վերահսկողության իրականացման քաղաքականությունը:

II ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Միջին մասնագիտական կրթության և ուսուցման որակի նկատմամբ վերահսկողությունը նպատակաուղղված է մասնագետների պատրաստման որակի բարձրացմանը:

2. Միջնին մասնագիտական կրթության և ուսուցման որակի ապահովման կազմակերպումը իրականացնում է Քոլեջում այդ գործընթացի համար ստեղծված որակի ապահովման պատասխանատու ներքին ստորաբաժանումները:

3. Քոլեջում որակի ապահովման գործընթացների սկզբունքներն են՝ գնահատման օբյեկտիվությունը, անընդհատությունը, թափանցիկությունը, միասնականությունը և հրապարակայնությունը:

III ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Պատշաճ վերահսկողություն սահմանել ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ, ապահովել դրա համապատասխանությունը գործող օրենսդրության, կանոնակարգերի, հրամանների, տնօրինական խորհրդի, որոշումների և ոլորտը կարգավորող այլ նորմատիվ-իրավական փաստաթղթերի պահանջներին:

5. Ապահովել իրականացվող կրթական ծրագրերի մասնագիտաման կրթական չափորոշիչներով սահմանված պահանջների կատարումը:

6. Որակի վերահսկման և ապահովման գործընթացը պետք է համապատասխանի հետևյալ սկզբունքներին՝

ա/ քոլեջը կրում է պատասխանատվություն միջին մասնագիտական կրթության որակի և կրթական չափորոշիչների պահպանման համար,

բ/ Ուսուցման որակի և ելքային արդյունքների համար քոլեջը հաշվետու է ուսուցման որակի հիմնական շահառուների՝ ուսանողների, տնօրինական խորհրդի, հիմնադրի և պետական այլ մարմինների առջև,

գ/ Քոլեջը պետք է կարողանա հավաստել իր կողմից առաջարկվող կրթության որակը,

դ/ Վերահսկել և ապահովել հաշվետվությունների և տեղեկատվության ժամանակին ներկայացումը պետական լիազոր մարմնին, տնօրինական խորհրդին, համապատասխան պետական մարմիններին:

ե/ Աջակցել Քոլեջում ուսուցման որակի բարձրացման և դրա ապահովման մեխանիզմների ձևավորմանն ու զարգացմանը, նպաստել Քոլեջի ռազմավարական նպատակների իրականացմանը:

զ/ Ուսումնասիրել և վերահսկել ուսումնական և օրացուցային պլանների, առարկայական ծրագրերի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին և ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցների պահանջներին:

է/ Վերահսկողություն սահմանել կրթական ծրագրերի իրականացման և որակի ապահովման համար պատասխանատու ստորաբաժանումների գործունեության նկատմամբ:

ը/ Ուսումնասիրել առարկայական /մոդուլային/ ծրագրերը, տալ համեմատական գնահատական, արձանագրել թերությունները, բացթողումներն ու կրկնությունները և միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ::

IV ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա/ Կրթական համակարգի բարեփոխումների և ուսման որակի բարձրացման վերաբերյալ ուսանողների և դասախոսների հետ պարբերաբար խորհրդակցությունների կազմակերպում,

բ/ ուսանողների կրթական մակարդակը գնահատելու համակարգի մշակում և ներդնում,

գ/ կրթական ծրագրի հիման վրա ապահովել ուսումնական հաստատությունում կրթության որակի վերահսկման և գնահատման ընթացակարգերի, ուսումնասիրությունների անցկացումը.

դ/ կազմակերպել ուսումնական հաստատությունում կրթության որակի մշտադիտարկման, ուսումնական հաստատության զարգացման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, մշակման, պահպանման և ներկայացման համակարգ՝ կատարելով կրթության որակի գնահատման արդյունքների վերլուծություն.:

թ/ Իրականացնել Քոլեջի զարգացման ռազմավարության դրույթներին: Համապատասխան որակի ներքին վերահսկողության քաղաքականություն:

V. ՔՈԼԵՋԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

7. Քոլեջն իր ծրագրերի, որակի և չափանիշների ապահովման համար մշակել է ուսուցման բովանդակության, ուսանողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, դաստիարակչական աշխատանքի կազմակերպման նկատմամբ վերահսկողության իրականացմանն առընչվող ընթացակարգեր, որոնք հետևողականորեն նպաստելու են Քոլեջի ռազմավարական նպատակների իրականացմանը:

8. Ընթացակարգերը տարածվում են քոլեջի գործառույթների վրա, որոնք ազդում են կրթական ծրագրերի չափանիշների պահպանման ապահովման վրա, ինչպիսին են՝ դասավանդումը,

նյութատեխնիկական բազան, կառավարումը, արտադրական պրակտիկան, հանրային ծառայությունները և համագործակցությունը գործատուների հետ:

VI ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՔՈԼԵՋԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. ***ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԵՆ՝***

ա/ Վերահսկողություն սահմանել Քոլեջում ուսումնական, ուսումնադաստիարակչական, ուսումնամեթոդական աշխատանքների կատարման նկատմամբ.

բ/ Վերահսկողություն սահմանել դասախոսությունների, լաբորատոր ու գործնական պարապմունքների, ուսանողների հաճախումների նկատմամբ, անհարգելի բացակայությունների յուրաքանչյուր դեպք դարձնել քննարկման առարկա, տալ առաջարկություններ համապատասխան խորհուրդներում կամ ամբիոններում քննարկելու համար:

գ/ Վերահսկողություն սահմանել ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի լիարժեք կատարման նկատմամբ և միջոցառումներ մշակել դրանց բարելավման և կատարելագործման ուղղությամբ:

դ/ Ուսումնասիրել ուսումնական պլաններն ըստ առանձին մասնագիտությունների, վեր հանել տեղ գտած թերություններն ու կրկնությունները, մշակել առաջարկություններ դրանք փոփոխելու և կատարելագործելու ուղղությամբ:

ե/ Վերահսկողություն իրականացնել առարկաների դասավանդման պրոցեսի ու պարապմունքների անցկացման արդյունավետության նկատմամբ և ուսումնասիրել դրանց համապատասխանությունը հաստատված կանոնակարգին, չափորոշիչներին և ընթացակարգերին:

Պարբերաբար կազմակերպել դասախոսությունների, լաբորատոր ու գործնական պարապմունքների դասալսումներ, արդյունքների քննարկումներ և նպաստել դասախոսների վերապատրաստման գործընթացին:

ե/ Վերահսկել ուսանողների առաջադիմության և առաջադիմության միջին որակային գնահատականի ձևավորման, դրանց վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար հավաքագրման և մշակման գործընթացները,

զ/ Վերահսկել ուսանողների գիտելիքների պարբերական ստուգումների, միջանկյալ և պետական ամփոփիչ ատեստավորումների, քննությունների, ինքնուրույն և անհատական աշխատանքների կատարման գործընթացները,

է/ Վերահսկել մասնագիտական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների կազմակերպման և անցկացման գործընթացները, ըստ առանձին մասնագիտությունների գնահատել արդյունավետությունը,

ը/ Վերահսկողություն սահմանել պետական քննական հանձնաժողովների գործունեության նկատմամբ:

թ/ Ուսումնասիրել առարկայական ամբիոններում պահպանվող փաստաթղթերի առկայությունը, գնահատել գործավարության վիճակը և վերահսկողություն սահմանել դրանց ժամանակացույցի համապատասխան և պահանջվող մակարդակով կատարման գործընթացի նկատմամբ:

ժ/ Վերահսկել մանկավարժների և մյուս աշխատողների աշխատանքի ընդունման գործընթացի համապատասխանությունը իրավական ակտերի դրույթների պահանջներին:

ի/ Ուսումնասիրել կրթական ծրագրերի պահանջներին համարժեք ուսումնական և նյութատեխնիկական բազայի ապահովվածության մակարդակը, գրադարանային ֆոնդի, ուսումնական լաբորատորիաների, ինչպես նաև տեխնիկական միջոցների առկայությունն ու պիտանելիությունը՝ դրանց համալրման ու վերազինման հնարավորություններն ու օգտագործման արդյունավետությունը:

լ / Ուսումնասիրել ուսուցման ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառման, համակարգչային տեխնիկայի ու ծրագրային նյութերի ընդլայնման և մեթոդական պահովվածության բարելավման հնարավորությունները:

խ/ Վերահսկողություն սահմանել համապատասխան ստորաբաժանումների միջև ուսումնական գործընթացի և այլ գործառույթների վերաբերյալ սահմանված ժամկետներում և կարգով տեղեկատվության փոխանցման գործընթացի նկատմամբ:

ծ/ Իրականացնել ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության մշտադիտարկում և բացթողումների վերհանում, ինչպես նաև բարելավմանն ուղղված միջոցառումների մշակում:

10. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1 վերահսկման ստորաբաժանումների անդամների պատասխանատվությունը սահմանվում է համապատասխան պաշտոնական ցուցումներով և սույն կանոնակարգով:

10.2 սույն կանոնակարգով նախատեսված գործառույթների իրականացման պատասխանատվությունը կրում են համապատասխան ստորաբաժանման ղեկավարն ու անդամները:

11. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

11.1. վերահսկող աշխատակիցը իրավունք ունի՝

ա/ Քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից պահանջել ու ստանալ կրթական գործընթացի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր ու տեղեկատվություն,

բ/ տնօրենի թույլատվությամբ ուսման որակի վերահսկման խնդիրների վերաբերյալ երաշխավորություններ և առաջարկություններ ներկայացնել կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին,

գ/ դասալսումների արդյունքների հիման վրա առաջարկություններ ներկայացնել Քոլեջի տնօրենին՝ առանձին դասախոսների հետ սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագրերի վերանայելու կամ լուծելու համար,

դ/ իր գործառույթների իրականացման ընթացքում համագործակցել տնօրենի, տնօրենի տեղակալների, ուսումնամեթոդական խորհրդի, դաստիարակչական խորհրդի, ամբիոնների, ուսանողական խորհրդի, դասախոսների և կրթական գործընթացին առնչվող այլ ստորաբաժանումների հետ:

VII ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը մշակելիս հիմք են հանդիսացել Քոլեջի կանոնադրությունը, <<Որակի ներքին ապահովման կարգ>>-ը, <<Ուսանողների գիտելիքների ընթացիկ,ամփոփիչ ստուգման, գնահատման>>-ը, << Ուսանողների գիտելիքների գնահատման բողոքարկման կարգ>>-ը, <<Ուսանողի հասրակական ակտիվության,պատշաճ վարքագծի դրսևորման գնահատման կարգ>>-ը, <<Կիսամյակային և փոխադրական քննությունների անցկացման,կուրսից կուրս փոխադրման>>-ը,<< Պետական ամփոփիչ ստուգման անցկացման , գնահատման կարգ>>-ը, <<Մասնագիտական կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգ>>-ը, <<Բացակայած ուսանողների բացակա դասաժամերի լրացման կարգ>>-ը, <<Ուսանողների կողմից դասախոսների գործունեության գնահատման կարգ>>-ը և այլ նորմատիվ իրավական ակտեր:

2. Սույն կարգը ուժի մեջ է մտնում սահմանված կարգով հաստատվելուց և վավերացվելուց հետո: